ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Մեր ընթերցողներին մանրամասնօրէն յայտնի են այն մեքենայականութիւնները, որոնց միջոցով անցեալ 1892 թուականին թատրոնական կոմիտէի անդամները, միացած իշխան Նապ. Ամատունու հետ, իրանց ձեռքում պահելու համար թատրոնի գործը՝ փոխեցին կոմիտեի լայն հասարակական բնաւորութիւնը և դարձրին մի նեղ և ամեն տեղ իւր անընդունակութիւնը և վնասակարութիւնը ապացուցած quasi-կուսակցութեան գործ։ Բաւական է ասելը, որ այդ մարդկանց իդէալը իշխան Ամատունին էր։ Ի չարը գործ դնելով այն հաւատը, որով 1891 թուականին իրանք մի տարի ժամանակով թատրոնի կոմիտէի անդամ ընտրեցին, նոքա իրանց սկսեցին երևակայել հայոց թատրոնի տնօրէն առհասարակ և 1892 թուականին, ինքնագլուխ կերպով նոր պայմաններ դնելով ընդհանուր ժողովների անդամ գրելու համար՝ իրանց համախոհների միջոցով նորից ընտրեցին, իրանց ընկերացնելով իրանց պէս մտածողներին 189²/₃ թուականի թատրոնը կառավարելու համար։ Հասարակական գործին ոչդպիսի ոգեղ կերպարանք տալու դէմ եղած նախազգուշացումները ոչինչ չօգնեցին։ Դորա հետևանքը այն եղաւ, որ նորընտիր կոմիտէը իւր դէմ լարեց հասարակութեան մի մասի ատելութիւնը և զրկուեց նորա թէ նիւթական, թէ բարոյական և թէ մտաւոր աջակցութիւնից։ Դորա հետևանքը եղաւ այն, որ թատրոնը 1892/3 թ. սեզոնի սկզբից արդէն սկսեց կաղալ և դեֆիցիտ տալ։ Սկսուեցին տարաձայնութիւններ կոմիտէի անդամների մէջ, որոնց վերջ տուողը պէտք է լինէր իրանց ընտրած ընդհանուր ժողովը։ Բայց որովհետև այն ընդհանուր ժողովը, որը նոցա ընտրել էր, ինքը մի մախինացիայի ծնունդ էր, ուստի կոմիտէը հարկ չհամարեց նորան դիմել, այլ ինքը իւր մէջ լուծուեց։ Կոմիտէի

անդամներից մէկը, որ նիւթական կարողութիւն ունէր, խայտառակութիւնը կատարեալ չդարձնելու համար, իւր վրայ վերցրեց գործի շարունակութիւնը մինչև սեզոնի վերջանալը, բայց գործին երկդիմի կերպարանք տալով. ոչ ոք չէր հասկանում թէ նա իբր մանաւոր անտարբերներ է գործը շարունակում թէ յանուն կոմիտէի կամ յանուն իրան ընտրած ընդհանուր ժողովի, հետևապէս անորոշ էր թէ նա պարտական է հաշիւ ներկայացնել թէ ոչ։ Սեզոնը վերջացաւ, բայց ոչ լուծուած կոմիտէը և ոչ էլ թատրոնի կառավարութիւնը շարունակող պ. Ենիկոլոփեանը հարկ դատեցին ընդհանուր ժողովին հաշիւ ու համար ներկայացնել։ Եւ ահա այսպիսով 1891 թուականին այնքան լաւ սկսուած գործը վերջացաւ կատարեալ բարոյական մնանկութիւնով, շնորհիւ ինտրիգանների այն բազմութեան, որով դեռ ևս այնքան հարուստ է մեր հասարակութիւնը։ Անցեալ տարուայ դէպքերից յետոյ այս տարի ընդհանուր ժողով կազմելը ընդհանուրի մատնակցութեամբ, այսինքն այն հիմունքներով, որ դրուեցին 1891 թ., անհնարին եղաւ։ Անցեալ 1892 թուականի կոմիտէտ ընտրող ընդհանուր ժողովը ունեցաւ իրան արժանի մի օրգան, յանձին նախկին կոմիտէտի, որը ապացուցեց թէ որքան տաղանդով կարող է խայտառակել թէ իրան, թէ իրան հաւատ ընծայող հասարակութեանը և թէ միանգամայն հասարակաց գործը ինքը։

Ոչինչ չկայ զարմանալու որ այս ամռանը եղած փորձերը՝ նորից վերականգնել հասարակական բնաւորութիւն կրող թատրոնը— ապարդիւն անցան։ Հասարակութեան փոխարէն այս տարի, թատրոնի գործը շարունակելու համար, ասպարէզ են գալիս մի խումբ դրամատէրեր, որոնք իրանց վրայ են վերցնում ամբողջ պատասխանատուութիւնը։

Ցառաջդիմութիւն համարել մենք այդ չենք կարող։ 1891 թուականի ձևով թատրոնի կառավարութիւնը բաւականի նպաստաւոր կերպով կարող էր փոխարինել մեզանում դեռ գոյութիւն չունեցող թատերասիրաց մի ընկերութիւն։ Այդ ձևով հասարակութիւնը կապում էր թատրոնի հետ աւելի սերտ կապերով, միջոց էր տրւում կառավարչական ոյժեր յառաջացնելու, մի բան, որ անհրաժեշտ պայման է ապագայում թատրոն հասկացող մի մեծ հասարակութիւն ստեղծելու. նա նախադուռն էր ապագայ «թատերասիրաց ըն-

կերութեան։ Այս տարուայ թատրոնական կառավարութիւնը իւր ձևով նոր չէ, այլ կրկնութիւն է այն բանի որ կար 1886/7 թուականին, երբ երեք կապիտալիստներ՝ Գ. Փրիդոնեան, Եսայի Փիթոյեան և Ա. Մանթաշեան մի տարի իրանց ռիսկով վարեցին թատրոնը, բայց դիվիցիտ ստանալով կամ գուցէ նաև այլ պատճառով, ետ քաշուեցին նոյն իսկ յաջորդ տարում։ Մի-մի տարի գործը տանելու համար այդ ձևը դեռ կարելի է ընդունել, բայց նա չի ունենալ այն յարատև և դաստիարակիչ նշանակութիւնը մեզանում, ինչ յատուկ է գործի հասարակական կառավարութեանը։

Այդ բոլորը, ի հարկէ, չպէտք է խարգարէ որ այս տարուայ թատրոն կառավարողները իրանց մեծ հոգսը շինեն գործը լաւ տանել, հաւատալով գործի ղեկավարութիւնը վստահելի անձերի։

ԼՈՒՍԻՆԻ։